ՀՏԴ 316.653 (054)

Ա.Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՆՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ «ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

Ֆրանսիայի Մարսել քաղաքում Մկրտիչ Փորթուգալյանի կողմից հրապարակվող «Արմենիա» թերթի էջերում լայնորեն ու բազմաշերտ ներկայացված է Վան-Վասպուրականը՝ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, հոգևոր-բարոյական ծանր հոգսերով ու հիմնահարցերով, մտահոգություններով ու տագնապներով: Թերթի հիմնադիր և խմբագիր Մ. Փորթուգալյանը խմբագրական, վերլուծական ու այլ կարգի նյութերով մեկնաբանում էր Վան քաղաքում և Վասպուրականի գավառներում ընթացող քաղաքական ու սոցիալական գործընթացները, սուր քննադատության էր ենթարկում թուրքական իշխանությունների հակահայ քաղաքականությունը, որը, ըստ էության, պայմաններ էր ստեղծում երկրի հայաթափման համար: Դիտարկվում են «Արմենիա» պարբերականի էջերում Վան-Վասպուրականում ծավալված իրադարձությունների անդրադարձն ու արձագանքը:

Առանցքային բառեր. Վան, «Արմենիա» պարբերական, հասարակական հակասություններ, ազգային գործիչ, քաղաքական ձերբակալություններ, հոդվածներ և թղթակցություններ:

Հայ ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ, մանկավարժ, դաստիարակ, հրապարակախոս Մկրտիչ Փորթուգալյանը 1885 թվականին թուրքական իշխանությունների կարգադրությամբ աքսորվեց Վանից և տարագրվեց Եվրոպա: Ֆրանսիայի Մարսել հայաշատ քաղաքում նա հիմնադրում է «Արմենիա» ազատամիտ պարբերականը, որի անդրանիկ համարը լույս տեսավ նույն թվականի օգոստոսի 1-ին: «Արմենիան» ազգային, հասարակական –քաղաքական և մշակութային լրագիր էր, որի էջերում բացեիբաց, առանց որևիցե կաշկանդումների և վարանումների, բարձրաձայնվում էին հայությանը հուզող խնդիրները, մտահոգությունները և տագնապները:

«Արմենիա» պարբերականն իր էջերում մշտապես անդրադառնում էր Արևմտահայաստանում տիրող իրավիճակին, արտահայտում ժողովրդական լայն զանգվածներին հուզող մեծ ու փոքր մտահոգությունները, հարցերն ու հարցականները: Նյութեր, հաղորդումներ, թղթակցություններ խմբագրությունը ստանում էր Արևմտահայաստանի գրեթե բոլոր գավառներից, սակայն ամենից հաճախակի հրապարակվում էին նյութեր Վան-Վասպուրականի բնակավայրերից: Ինքը՝ խմբագրապետ Մ. Փորթուգալյանը բավական հաճախ խմբագրական, վերլուծական և այլ կարգի նյութերով մեկնաբանում էր Վան-Վասպուրականում ընթացող քաղաքական, սոցիալական, ազգագրական գործընթացները, սուր քննադատության

ենթարկում թուրքական իշխանությունների հակահայ քաղաքականությունը, որն, ըստ էության, պայմաններ էր ստեղծում երկրի հայաթափման համար:

Փորթուգալյանը քաջ գիտակցում էր և բազմիցս նշում էր, որ սույն իրավիճակը անփոփոխ մնալու դեպքում երկիրը զրկվելու էր իր հայ ազգաբնակչությունից: Հայ աշխարհի բոլոր մասերում գրեթե նույն ցավոտ, անմխիթար ու ողբերգական իրավիճակն էր տիրում: Սուլթանական ամենազոր բռնությունն ու կամայականությունը առավել ցայտուն դրսևորվում էր Վասպուրականում, որի նպատակն էր բռնի հայաթափության ենթարկել հայահոծ ու հայաշեն այդ երկրամասը:

Պարբերականի առաջին իսկ համարներում երևաց Վան-Վասպուրականի կենդանի պատկերը, լսվեց նրա ձայնը՝ ծանր, մտահոգիչ, բազում հոգսերով ու ցավերով ծանրաբեռ:

«Թիւրքիան չուզէր լսել» խորագրով հրապարակման մեջ ասված է. «Արմէնիաի Ա. թուով մենք գրած էինք, Վանի վերաբերեալ մի յօդուածի մէջ, թէ կառավարական երկրորդական պաշտօնեայներ և չօրպաճիներ խեղճ ժողովրդի արիւնը կը ծծեն: … Միեւնոյն ժամանակ ապագային մէջ չար թելադրութիւններէ զգուշացնելու համար Նորին Բարձրութիւնը, յայտնած էինք թէ այդ հարստահարիչներ այնպիսի ճարպիկ և անխիղճ մարդիկ են… որ պիտի ջանան Արմէնիաի ձայնը խեղդելուն որպէս զի Բ. Դուռը չիմանայ Հայաստանի բուն վիճակը որ շատ սարսափելի է արդարեւ»[1]: Թերթը սկզբնական շրջանում զգուշավոր էր արտահայտվում թուրքական իշխանությունների հասցեին, սակայն այն ամենևին էլ ճիշտ չընկալվեց վերջիններիս կողմից: Օսմանյան տեղական և կենտրոնական իշխանությունները անդրդվելի էին ազատ խոսքի հանդեպ և չէին հանդուրժում որևիցե քննադատություն: 1885թ. սեպտեմբերի 16-ին Մ. Փորթուգալյանը նշում էր, որ «Մեր տխուր գուշակութիւն կատարուեցաւ այժմ: Արմենիաի նոյն իսկ Ա թիւը երբ կը հասնի Վան, նահանգային գրաքննիչ ժողովը վտանգավոր համարելով զայն, կարգիլէ ցրելու բաժանորդներին» [1]: Նույն տեղում նշվում է, որ տերության մայրաքաղաք Կ. Պոլիս հասնում է պարբերականի մինչև չորրորդ համարը, որից հետո այն արգելվում է:

Արգելքն, իհարկե, ծանր էր, սակայն չվհատեցրեց ազատասիրական ու հեղափոխական գաղափարներ դավանող պարբերականի խմբագրին: Հաջորդ համարում իսկ շեշտադրվում էր, որ պարբերականը կշարունակի քննադատել թուրք պաշտոնյաների թույլ տված չարաշահումներն ու կամայականությունները և «պիտի շարունակէ բարձրացնել իւր ձայն մինչեւ որ լսելի ըլլար պետք եղածներու կողմէն» [1]:

«Անապահովութիւն նամակների համար անգամ» հրապարակումով խստորեն քննադատվում էին Վանի տեղական պաշտոնատար անձինք, որոնք գրա-

քննության էին ենթարկում Վան ուղարկված անձնական նամակները. «կը զարմանանք և կը հարցունենք թէ արդէօք ի՞նչ օրենքի, ի՞նչ իրաւունքի կամ ի՞նչ հիման վրայ կրթնած, մի այսպիսի անտեղի խստութիւն ի գործ կը դրուի» [1]: Փորթուգալյանը կասկածի տակ է առնում Վանի նահանգապետ Համիտ փաշայի արդարասիրությունը, որին «մօտէն կը ճանչնանք և նույն իսկ Վանէն զմեզ հեռացուցած ատեն իւր արած ցաւակցական խօսքերն և արդարասիրական զգացումների արտայատութիւնները շատ հեռի կը տանին զմեզ մի այդպիսի բանի հաւատալէ» [1]: Նմանապես կասկածի սլաքն ուղղվում է Հարություն պատրիարքի ուղղությամբ, նշելով, որ մի՞ թե վերջինս Վանի իր տեղապահին իրավունք վերապահած է «այս կամ այն անձի հասցէին ղրկած անձնական և ընտանեկան նամակները գաղտնի Բօլիսին միջոցով առաջնորդարան բերել տալ, կարդալ» [1]: Ի վերջո, համոզմունք է հայտնվում, որ «Յարութիւն Ս. Պատրիարքը այնչափ օրէնսգետ է որ գիտէ թէ ինք անձնական և ընտանեկան նամակների գրաքննիչ լինելու պաշտօն չունի և իւր չունեցած պաշտօն անշուշտ չը յանձնէր իւր տեղապահին ի Վան» [1]: Սույն փաստը ընդհանրացնելով լայն համապատկերի վրա, հետևյալ հարցադրումն է արվում. «Երջանիկ Հայաստանէն զատ կա՞յ աշխարհին վրայ մի ուրիշ տեղ ալ ուր մարդիկ այս աստիճան ճնշման ենթարկուին իրենց հանդարտ վիճակին մէջ» [1]: Թերթի էջերում բազմաթիվ էին թղթակցություններն ու տեղեկությունները Վանի հասարակական կյանքի զանազան ոլորտներից, ուսուցիչներից, մշակներից, պանդուխտներից և այլն: Գրում էին իրենց շուրջը կուտակված անթիվ-անհամար հոգսերից, մտահոգություններից, տագնապներից: «Վանեցի հայ բեռնակրի լուման» վերնագրով նյութը ինքնախոստովանանք էր վանեցի մի պանդուխտի, որը, թողնելով հայրենի գյուղը (ուր պապը մելիք, իսկ հայրը տանուտեր էր եղել), ստիպված գաղթել է օտար երկրներ: 1877-78թթ. պատերազմի ժամանակ թուրքական զորքը քարուքանդ է արել իրենց տունուտեղը. «հօրս հետ մեր սայլերով ու եզներովը տարապարհակ վարեցանք դէպի Պեյազիտ. հօրս ոչխարի պէս մորթեցին ճանբան. ես հրաշքի պէս փախայ այդ մարդասպաններու ձեռքեն» [2]:

Հինգ տարի Կ. Պոլիսում բեռնակրություն անելով, պանդուխտ Մելիքենց Մուշեղը տուն վերադառնալու ճանապարհին նորից թալանվում է կարնեցի թուրք և քուրդ ավազակախմբի կողմից: Ապա հասնում հայրական կիսավերակ օջախ,նրան պաշարում են թալանչի քրդերն ու զապթիաները: Նորից ստիպված է լինում բռնելու պանդխտության ճանապարհը. «Երկու տարին լրացաւ, արխն քրտինք թափելով 13 ոսկի աւելցուցեր եմ բերնէս ու անհրաժեշտ պետքերես, որմէ յիսուն ֆրանգ «Արմէնիա» լրագրին նուէր կուղարկեմ որ թուղթ առնէ մեր երկրին ցաւերը գրելու» [2]:

Բանտարկյալների վերաբերյալ հաճախ էին թղթակցություններ տպագրվում «Արմենիայի» էջերում: Սովորաբար այդ թղթակցությունները հրատարակվում էին «Հայ բանտարկեալները Վանի մէջ» խորագրի ներքո:

«Պր-ն Մ. Թէրլեմէզեանի դատաստանը ի Վան» ծավալուն հրապարակումով 1885 թվականի դեկտեմբերի 19-ին ընթերցողներին տեղեկացվում էր, որ հայտնի մտավոր և հանրային գործիչ Մկրտիչ Ավետիսյանը «32 օրէ ի վեր տակաւին բանտին մէջ կը քաւէ իւր մեղք կամ թիւրք ժողովականների բառովն՝ ճինայէթ (եղեռնագործութիւնը)» [1]: Թերթը հարցադրում է, թե ինչ է այդ պարոնի արած եղեռնագործությունը և ներկայացնում Մկրտիչ Թերլեմեզյանի անցած աշխատանքային ուղին: Պատմության և աշխարհագրության բազմաշնորհ ուսուցիչը դպրոցի աշակերտների համար գծած Վանի քարտեզի մեկ օրինակը փոստով ուղարկում է Կարինի հոգևոր առաջնորդ Գեր. Օրմանյանին, որը Կարինի վարժարանի համար է ցանկացել ունենալ այն: Սակայն Կարինի փոստային պաշտոնյաները «կը կասկածին և քննելէ յետոյ կիմանան թէ այդ քարտէզ ռազմագիտական տեսակետով շինուած չէ, այլ դպրոցական աշակերտների գործունեութեան համար, ուստի կը յանձնեն իւր հասցէի» [1]:

Սակայն Վանի իշխանությունները, տեղեկանալով այդ մասին, անմիջապես ձերբակալում են Թերլեմեզյանին: Նշենք, որ Մ. Թերլեմեզյանը (Ավետիսյան) Վանում ուսանել է Փորթուգալյանի հիմնադրած «Կեդրոնական» վարժարանում և ցուցաբերել է օրինակելի վարքագիծ ու փայլուն առաջադիմություն բոլոր առարկաների գծով: Աշակերտի և ուսուցչապետի անձնական ու աշխատանքային հարաբերությունները միշտ եղան ու մնացին բարձր բարեկրթության մակարդակի վրա: Ահա թե ինչու «Արմենիա» խմբագրապետը այսպիսի ոճով ու ոգով է արտահայտվում իր նախկին սանի մասին. «Յայտնի չէ թէ Պ. Մ. Թերլէմեզեան, Վանի հայ երիտասարդութեան բարէկիրթ, ազնուական եւ ուսեալ ներկայացուցիչներէ մին, տակաւին քանի՞ ամիսներ պէտք է անցունէ բանտի մէջ քաւելու համար իւր այս ծանր եղեռնագործութիւն *որ է արդիւնաւոր հայ ուսուցիչ լինելը* (ընդգծում մերն է-Ա. Կ.)» [1]:

Թերթը հեգնանքի է ենթարկում Թերլեմեզյանին հարցաքննող թուրք քննիչներին, որոնց անգրագիտությունը պատմությունից և աշխարհագրությունից չափ ու սահման չունի. «անոնցմէ շատերը չը գիտեն մինչև անգամ թէ երկիրը մի կլոր գունտ է և արևին շուրջ կը դառնայ. առաջին անգամ լինելով կը լսեն այդ բաներ» [1]:

Եվ մի կույր նախանձ թույնի պես վարակել է այդ մահմեդական դատավորների հոգին, որ հայի ոչ միայն նյութական և բարոյական, այլև դպրոցական «յառաջդիմութին ալ յանցանք կը համարին իրենց համար: Հայ աշակերտը

աշխարհագրական քարտէզ գծէ... ի՞նչ եղեռնագործութիւն, ապստամբական շարժում»[1]: Փակված «Կեդրոնական» վարժարանի Ա դասարանի աշակերտներն անգամ, որոնց աշխարհագրություն էր դասավանդում Մ. Թերլեմեզյանը, իշխանությունների կողմից ենթարկվել են ծանր հարցաքննության:

1886թ. հունվարի 13-ին «Նոր Տարի» առաջնորդողում թերթը նշում է, որ անցած՝ 1885 թվականը Հայաստանի մեջ թուրք կառավարության կողմից գործադրված ճնշումներով նշանավոր թվական եղավ: Բազմաթիվ հայեր ձեռբակալվեցին, բանտարկվեցին և աքսորվեցին, իսկ մեր «Ս. Եկեղեցիների դուռներ մարդկային աղբերով ծեփուեցան... Վանի քահանայների խմբովին բողոքը այդպիսի սրբապղծութեան դէմ արդիւնք չունեցաւ, բայց միայն թուրք լամուկները քաջալերուեցան իրենց չարագործութեան մեջ» [2]: «Արմենիան» համարձակորեն քննադատում էր ազգային իշխանության մարմիններին թուրքական իշխանություններին հլու-հնազանդ ծառայելու և հակահայ բռնությունների դեմ չբողոքելու համար: Այս առումով խիստ քննադատության թիրախում էին հաճախակի հայտնվում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և Վանի Առաջնորդարանը: Այսպես, 1886թ. հունիսի 26-ին Մ. Փորթուգալյանը տագնապով շեշտադրում էր, որ «Կ. Պոլսի Պատրիարքարանի դրութինը երբէք այնչափ յուսահատական չէր եղած Տաճկահայաստանցիների համար, որչափ այժմ Յարութիւն պատրիարքի օրով: Վանէն, Բաղէշեն, Տիգրանակերտէն և այլ տեղերէ մեր ստացած վերջին նամակներ անհերքելի ապացույց են մեր այս ըսածի» [2]:

Շարունակելով սույն թեման, նշվում է, որ ազգային գործերին քիչ թե շատ հետաքրքիր մի հայ չկա, որ ծանոթ չլինի Վանի Առաջնորդական տեղապահ Պողոս եպիսկոպոսի տխրահոչակ անցյալին և քստմնելի ներկային: Վանի հասարակության մեծամասնությունը, նույնպես և «Երեսփոխանական, Քաղաքական և Կրօնական ժողովների մեծամասնութինները խնդրագիրներով, հեռագիրներով կը դիմեն Յարութիւն պատրիարքին, որ այս եօթնապատիկ փորձանքը հեռացնէ Վանի հայ ժողովրդի գլխէն և թոյլ տալ իրենց ըստ օրինի մի առաջնորդ ընտրել» [2]: Սակայն Հարություն պատրիարքը ոչ միայն անկարեկից կմնա արդարության ձայնին, այլև մինչև իսկ հրաման է արձակում՝ լուծարելու ժողովրդի ազատ քվեով ընտրված ազգային ժողովները, որոնք համաձայն չեն Պողոս եպիկոպոսին: Այս աստիճան բռնապետություն, «այս աստիճան համարձակութիւն օրէնքի և արդարութեան ձայնը խեղդելու համար, այս աստիճանի արհամարհանք ժողովրդի ձայնին և պաշտպանութին Պօղոսի պէս մի եպիսկոպոսի որ նախատինքն է հայ եկեղեցականության, շատ տխուր մտածումներ կը ներշնչեն մեզ» [2]: Հաղորդվում է, որ 300 վանեցիներ ընտանիքներով հանդերձ Պողոս եպիսկոպոսի բռնություններից ազատվելու համար դիմել են ծայրահեղ միջոցի՝ հանրագիր են ստորագրել՝ ուղղված Թուրքիայի կաթոլիկ հայերի առաջնորդին, որպեսզի Վան հոգևոր հովիվ ուղարկե:

Հաջորդ համարներում «Կրօնական շարժումն ի Վան» խորագրի ներքո նոր մանրամասնություններ էին հաղորդվում Վանում ծավալվող հասարակական խմորումների և բախումների հորձանուտից: Թերթում հրապարակվեց վանեցի հայերի հանրագիրը՝ հասցեագրված կաթոլիկ հայերի պատրիարքին: Կրկին նշվում էր, որ Վանի այս բոլոր «ազգակործան խռովություններին մէջ մեծ պատասխանատուութիւն կը ծանրանայ Յարութին պատրիարքի վրայ, որ գործը այս ծայրայեղ աստիճանին հասուց, բացէ ի բաց անիրաւութեամբ պաշպանելով իր սրտալից հին բարկամ Պօղոս եպիսկոպոսը» [2]:

Պողոս եպիսկոպոսի ստոր վարք ու բարքերի, նենգ ու պատիր գործելակերպի մասին թերթի էջերում բազում և բազմապիսի նյութեր էին հրապարակվում: Քննադատության էին ենթարկվում պատրիարքարանի կողմից ուղարկված այն քննիչ պաշտոնյաները, որոնք պետք է Վանում դեպքերի և իրադարձությունների իսկությունը պարզեին: Վանից ուղարկված մի նամակից, սակայն, պարզվում է, որ վերոնշյալ պաշտոնյաները դիմել են Պողոս եպիսկոպոսին՝ «թէ իրաւ է որ ժողովուրդը իրեն չուզելու համար մինչև իսկ կրօնափոխութեան պիտի դիմէ և երբ Պօղոս եպիսկոպոս պատասխաներ է թէ սուտ է, իրենք հաւատացեր են, առանց գոնէ սպասելու իրենց քննիչ կարգուած Գեր. Օրմանեանի ղրկելիք տեղեկութեան, և կուզեն պաշտօնական յայտարարութեամբ ժողովրդին ալ այդպես հաւաստացուցանել և խաբել» [2]:

1886թ. հուլիսի 24-ին «Վանի Պօղոս եպիսկոպոսի խնդիրը» հրապարակման մեջ ասվում է, որ վերջապես արդարությունը փորձում է հաղթել, քանզի «Գեր. Օրմանեան եպիսկոպոս հեռագրով հաղորդեր է պատրիարքարան իւր քննութեան արդիւնքը որ աննպաստ է Պօղոս եպիսկոպոսին» [2]: Օրմանյանը կարողացել էր իրերը կոչել իրենց անուններով և ապացուցել, որ Պողոս եպիսկոպոսի կատարած երեսփոխանական նորոգ ընտրությունները ապօրինի են: Իսկ պատրիարքարանը, վերջապես համոզվելով, որ այլևս իրեն պատիվ չի բերում Պողոս եպիսկոպոսի պաշտոնավարությունը Վանում, «որոշեր է պաշտօնանկ ընել Պօղոս եպիսկոպոսը, պատրիարքական փոխանորդ կարգելով Վան Գեր. Գէորգ Ծ. Վարդապետ Ռուսճուգլեանն» [2]: Հետագայում ևս Պողոս եպիսկոպոսի, նրա համախոհների և կատարած չարագործությունների խնդիրը անպակաս էր պարբերականի էջերից: Չարամիտ եպիսկոպոսի դեմ հասարակական և ազգային անհանդուրժողականության արտահայտությունները հետզհետև առավել թեժացան. «*Կան մարդեր որոնց համար եպիսկոպոսական լայն զգեստը բաւական է ծածկելու համար իւր ներքև ամեն չարագործութիւններ.. Բայց մենք կրօնականներէն աւելի կրօնը կը յարգենք, որ պատրիարքէ և առաջնորդներէ աւելի ազգը կը սիրենք, … և մեր պժգանք և զայրոյթ հրապարակաւ կը յայտնենք*

այդ Յուդա- Պողոսների դեմ և միանգամայն մեր զարմանք նոցա վրայ որոնք Յուդան Քրիստոսէ աւելի և չարագործ Պողոսը հայ ազգէն աւելի կը պաշտէն» [2]*:* Թերթի համոզիչ մեկնաբանությամբ, որ շրթունքը չի սարսռա և չի դողդողա «Սրբազան» բառը արտասանել Պողոսի պես չարագործի համար. «Ինչպես կարելի է Սրբազան անուանել և իբր հայ եկեղեցական պաշտպանել այն անձ որ 35 տարիներէ հետէ կը խռովէ և կը խառնէ անդադար Վասպուրականի հայ ժողովուրդը... Ինչպես կարելի է հայ լինել, սիրտ ունենալ և չյուզուիլ այս տեսարանէ» [2]: Ըստ «Արմենիայի» դիտարկումների, այս ամենը կատարվում է թուրքական իշխանությունների գաղտնի մեքենայություններով, որոնց ձեռնտու են Հարությունի պես պատրիարքներ և Պողոսի պես առաջնորդներ կարգել հայ ազգի գլխին: Պողոս եպիսկոպոսը համեմատվում և նույնացվում է 5-րդ դարի հանրահայտ դավաճան Վասակի հետ. «Վասակ այս անգամ վակասով կը ներկայանայ, եպիսկոպոսական զգեստներով հրամանատարութիւն կընէ թուրք բանակին որ կոտորեն հայերն և եկեղեցին իւր զաւակների կարմիր արիւնովն ներկեն» [2]:

1886 թվականի ամռանը տեղի ունցած կարևոր, հուզախռով իրադարձությունը Վան քաղաքում հուլիսի 4-ին տեղի ունեցած ընդհարումն էր հայ բնակչության և կառավարական զորքերի, որը երկար ժամանակ լարվածության մեջ էր պահում հասարակական կարծիքն ու հանրային անդորրը: Այդ դեպքերի վերաբերյալ առաջին հրապարակումը եղավ 1886թ. հուլիսի 28-ին «Հայ ժողովրդի եւ թիրք զորքերի կռիւը Վանի մէջ» թղթակցության ներածականում խմբագրությունը հայտնում էր, որ Վանից մի քանի նամակներ են ստացել, որոնք մանրամասն նկարագրում են քաղաքում կիրակի օրը՝ հուլիսի 4-ին տեղի ունեցած ծանր դեպքերը: Ըստ խմբագրականի, Առաջնորդական տեղապահ Պողոս եպիսկոպոսի և նահանգապետ Համիտ փաշայի բռնություններից ծագում առած այս կռվի մեջ 10-ի չափ թուրք զինվորներ են վիրավորվել, իսկ հայերից 25 վիրավորներ կան՝ և՛ ծանր, և՛ թեթև վերքերով:

Հուզումները ծագել էին այն բանից հետո, երբ Պողոս եպիսկոպոսը ապօրինի կարգով նշանակել էր Առաջնորդական ընտրություններ վերոնշյալ կիրակի օրը: Պողոսն իրեն աջակից ու զինակից ուներ Վանի տեղական ու բարձր իշխանություններին: Իրավիճակի սրացումն ու լարվածության աճը Պողոսի օգտին էր, քանզի դա առիթ էր ընձեռում՝ կամայական կերպով ձերբակալելու անհնազանդ ու առաջադեմ մարդկանց: Սույն իրողությունը քաջ գիտակցում էին «Արմենիա» պարբերականի խմբագրությունում, որի խմբագրապետն այս առիթով չէր հոգնում մշտապես կրկնելուց, որ «Բ. Դուռը իւր բարձր պաշտօնատարների միջոցով կաշխատի անդադար խռովութեան սերմեր ցանել հայ ժողովրդին մէջ,

պառակտել զանոնք, իրարու հետ կռուեցունելով անհանգիստ ընել և սպառել նոցա ոյժեր.. Երկրին վալին կամ գայմագամը իրեն գործիք դարձունելով հայ առաջնորդը կամ հայ աղաներին, կը միջամտէ մեր ազգային ներքին գործերին» [2]:

Ընդ որում, Փորթուգալյանը միանգամայն իրավացիորեն նշում է, որ Վանի նահանգապետ Համիտ փաշան ինքնագլուխ չէր հանդգնի անել այդ քայլը. «Սա մի պատահական բացառութիւն չէ Համիտ փաշայի կողմէն, այլ Բ. Դրան կողմէն կարգադրուած մի ծրագիր է, թիւրք կառավարութեան կողմէն յատուկ նպատակով ընդունուած մի դրութիւն է, պառակտել Արմենիաի հայ ժողովուրդը հայ անուն Վասակների միջոցով և անդադար անհանգիստ ընել զայն» [2]:

Վանում տեղի ունցած հուզումներն ու բախումները, Փորթուգալյանի խորին համոզումով, հիշեցնում են Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի անգործադրելի լինելը: Վանի կուսակալ Համիտ փաշան «որպէս ապստամբութիւն զսպող փառաւորուեցաւ Ա կարգի Մէճիտիյէ պարտուանշանով, իսկ կռուին մէջ վիրաւորուած զինուորների աստիճանները բարձրացան» [2]:

Հետագա օրերին ևս պարբերականը ուշադիր հետևում էր ընթացող իրադարձությունների զարգացմանը Վանի և այլ վայրերի թղթակիցների, ինչպես նաև այլ պարբերականների միջոցով: Իսկ Վանից ատացված թղթակցությունները գուժում էին, որ ձեռբակալություններն ու բանտարկությունները դեռ շարունակվում են: Հաղորդվում է, որ բանտարկվածների մեջ կան անգամ 14-15 տարեկան տղաներ: Իսկ Օտյան Հակոբի «քազինօն որ Այգեստանի մէջ Քէնտրոնջիի հրապարակին վրայ առաջին կարգի գեղեցկագիր և վայելչազարդ զբօսարան էր թէ՛ հայ և թէ՛ թիտք հասարակութեան համար, կառավարութեան կողմէն փակուած է առժամանակեայ կերպով, իբր թէ տղայոց յեղափոխական լինելուն համար» [2]: Իսկ Պողոս եպիսկոպոսի համախոհները Կ. Պոլիս՝ Բ. Դուռ հեռագիր են հղել, թե «ի բացակայութեան Պօղոսի հայ ժողովրդի հանդարտութիւնը կասկածի տակ է: Ուստի և կը խնդրեն որ նորա պաշտօնի վերահաստատումը պահանջուի Պատրիարքէն» [2]: Ասվում է, որ ժողովրդի շրջանում բռնի ստորագրահավաք է կատարվում՝ ի նպաստ Պողոսի:

Վերստին վերլուծության ենթարկելով Վանում ստեղծված իրավիճակը՝ «Արմենիայի» խմբագիրը մեղքի ու մեղավորության մեծ բաժինը դնում է Հարություն պատրիարքի ուսերին. «Մենք կը զարմանանք թէ ինչու՞ պատրիարքարան չուզեց լսել ժողովրդին որ իրմէ հրահանգ խնդրեց ըստ օրինի ընտրել իւր առաջնորդ և բռնի ուզեց այսչափ ժամանակ Վանի ազգային իշխանութեան գլուխ պահել Պօղոսը, քանի որ Պօղոսը առաջնորդ չէ, ժողովուրդէն ընտրուած չէ, այլ Առաջնորդական տեղապահ էր առժամանակեայ կերպով: Բոլոր ասոնք Յարութին պատրիարքի վարչական կատարեալ ապիկարութեան, եթէ ոչ չարակամութեան հետևանքն են» [2]: Պողոսյան խմբակցության դեմ պայքարը գրեթե բարձրացվում էր համազգային կարևոր խնդրի մակարդակին: Վառնայից թղթակիցը

հետևյալն էր շեշտադրում. «Վերջապէս կարող եմ ըսել որ Վանցի հայք սկսեցին մեր թշուառութեան պատճառները ոչնչացնել, Պողոսեանց նման ճիւաղները ջնջել ասպարէզին վրայէն և եթէ ի Հայաստան և ի պանդխտութեան գտնուող հայու տղաքներն միանան իրարու հետ, աներկբայ եմ որ այսպիսի ազգային անվայել խնդիրներն կը վերջանան մեր մէջ այն ատեն և մեզ կը մնայ օտար թշնամեաց բռնութեան դէմ պաշտպանել զմեզ» [2]: Սա, իհարկե, ճշմարիտ եզրահանգում է, քանզի ամեն տեղ ու ամենուրեք Վանի Պողոս եպիսկոպոսի նմաններն էին, որ Հռոմի պապից ավելի կաթոլիկ երևալով, գործիք էին դառնում օսմանյան իշխանությունների ձեռքին և դրանով իսկ կազմալուծում ու ավերում էին հայ ժողովրդի միասնության ընթացքին ուղղված բոլոր ջանքերն ու ձեռքբերումները: Պողոսի նմանների միջոցով է, որ հայոց հակառակորդները դյուրին կերպով պառակտում էին միասնական շարժումներն ու նպատակադրումները: Վանում ստեղծված իրավիճակն այնքան էր անհանգստացրել Մ. Փորթուգալյանին, որ 1886թ. սեպտեմբերի 11-ին հատուկ հայտարարությամբ հանդես եկավ, որում ասված էր. «Ձեր ողբալի դրութիւն կը խորովէ մեր սիրտ, կզգանք այն բոլոր դառնութիւններ որ ձեր բաժին եղած են, ձեր փախստական վիճակին մէջ: Վտանգը ամեն րոպէ կանգնած է ձեր գլխի վրայ. կեանքն անգամ թշուառութեան շարունակութիւն մ՛է այսուհետև ձեզ համար, քանի որ հայրենիքի կենսատու հողէն և ջուրէն, ձեր սիրելի ծնողներէ, մտերիմ բարեկամներէ, վերջապէս ձեր սրտին մոտիկ ամեն յիշատակներէ զրկուելու դատապարտված եք» [2]:

Փորթուգալյանը հորդորում, կոչ է անում Վանից փախստական եղած հայերին մի կերպ հասնել Մարսել, որտեղ «Արմենիայի» խմբագրի բնակարանը բաց կլինի նրանց համար և ուր «իրենց հին բարեկամը պատրաստ պիտի գտնեն իրենց հետ բաժնելու իւր հաց և գինի, մինչեւ որ իրենց համար պատրաստի մի գործ ճարուի» [2]: Ընդ որում՝ խմբագրությունը պատրաստակամ էր անգամ ճանապարհածախսի համար օգնություն տրամադրել փախստական վանեցիներին. «Եթէ այդ խեղճեր ճանապարհի ծախք հայթայթել ալ անկարող կը գտնուին, կարող են գրել ադոր համար» [2]:

Պարբերականը շարունակում էր Վանի դեպքերի շուրջ ներկայացնել բազմակողմանի տեղեկատվություն: 1886թ. սեպտեմբերի 15-ին «Վանի դեպքերէն» խորագրի ներքո թղթակցությունը հաղորդում էր, որ բանտարկվածների վիճակը մնում է շատ ցավալի: Նրանց ընտանիքները մնացել են անգործ:

Եվ թեև վանեցիներն իրենց շրջապատում մի հանգանակություն արել են բանտարկյալների ընտանիքներին օգնելու համար, բայց այդ «փոքր գումար ի հարկէ շատ անբնական եղած է նոցա մեծամեծ վնասների և իրենց անհրաժեշտ պետքերի համար» [2]:

Նույն համարում հաղորդվում էր, որ Անգլիայի խորհրդարանի 1886թ. օգոստոսի 26-ի նիստում Ջեյմս Բրայսը հարցում է արել երկրի արտաքին գոր-

ծերի նախարարին, թե կառավարությունը տեղեկություններ ունի՞ Վանում թուրքական ոստիկանության և հայ ազգաբնակչության միջև եղած ընդհարումների վերաբերյալ: Արտաքին գործերի նախարարի խորհրդականը պատասխանել է, որ Վանի անգլիական «դեր-հիւպատոս Պ. Պարննըմէն եկած տեղակագրէն իմացած են որ լրագրական հրատարակութիւնները չափազանցած են երկու կողմին կրած վնասները» [2]:

Խորհրդականը նաև հայտնել է, որ թուրքական իշխանությունները խառնվել են հայության ներքին գործերին Վանի առաջնորդական տեղապահ Պողոս եպիսկոոսի խնդրանքով: 1886թ. հոկտեմբերի 6-ին թերթը հայտնում էր,որ Վանի երեք բանտարկյալները՝ Հակոբ Իջղալացյանը, Հովհաննես Աստվածատուրյանը և Խաչատուր Կերեքցյանը ազատ են արձակվել: Չնայած այդ հանգամանքին, թերթում նորանոր նյութեր էին հաղորդվում, որ Պողոս եպիսկոպոսի հեռանալուց ի վեր նրա կուսակիցները ամեն ջանք գործադրում են «տակնուվրայ անել ամեն բան, որպէսզի ցոյց տան թէ անկէ զատ ոչ ոք ձեռնահաս է Վան կառավարելու» [2]:

Վանից ուղարկված մի այլ նամակ հաղորդում էր հետևյալը. «Երկրիս վիճակի յոյժ տխուր է: Քուրդեր մի կողմանէ, արքունի զինուորներ միւս կողմանէ, արձակ համարձակ հարստահարում են անպաշտպան հային: Այս անցեալ 30 օրուայ ընթացքում միայն սարսափելի ոճիրներ գործուեցան» [2]: Նամակագիրը հայտնում էր, որ հայ կանանց և օրիորդներին բռնաբարում են բացահայտ:

1886թ. նոյեմբերի 20-ին պարբերականը հայտնում էր, որ Կ. Պոլսում ձերբակալված վանեցի հայտնի հանրային գործիչ Գարեգին Բաղեշեցյանը չորս օր բանտում անցկացնելուց հետո ազատ է արձակվել: Ոստիկանությունը գիշերով էր խուժել նրա սենյակ և այնտեղ եղած թղթերն ու այլ իրեր հավաքելով՝ ձերբակալել էր: Իսկ վանեցի մեկ այլ հայտնի դեմք՝ Կարապետ Նաթանյանը, որը «իւր հայրենիքէ աքսորուած կը մնար Կ. Պոլիս, իւր անմեղութիւն յայտնուելով թոյլատուութիւն ստացեր է վերադառնալ իւր հայրենիք և մեկներ է Կ. Պօլիսէն հոկտեմբերի 30» [2]: Հուզումների հետևանքով ձերբակալված հայորդիներին պարբերականը անվանում է քաղբանտարկյալ: Այսուհետ «Քաղաքական յանցանքով բանտարկուածներ ի Վան» խորագրի ներքո պարբերաբար տեղեկություններ էին հաղորդվում ձերբակալման մեջ գտնվողների որպիսության, նրանց ընտանեկան և սոցիալական վիճակի վերաբերյալ:

Այսպես, 1887թ. հունվարի 5-ին թերթը ընթերցողներին հայտնում էր, որ քաղբանտարկյալներից Կարապետ Ջրբաշխյանը ազատ «արձակուեցաւ երաշխաւորութեան տակ առնելով, իսկ պարոններ Գէորգ Օտեան, Միքայէլ Նաթանեան, Գրիգոր Պէօզիկեան, Ռուբէն Շատուորեան, Արիստակէս Ախիկեան և

Յովհաննէս Քանքանեան տակաւին կը մնան բանտը ուր շատ տաժանելի վիճակի են ենթարկուած» [3]:

Հայտնվում է, որ մեարտիֆի (ուսումնական) ժողովը մի շաբաթվա ընթացքում երկու անգամ խուզարկել է «Կեդրոնական» վարժարանի աշակերտների օգնությամբ կազմավորած գրավաճառանոցը և գրավել մի շարք կարևոր հայրենագիտական գործեր:

Հաջորդ համարում վերստին անդրադառնալով Վանա խնդրին՝ պարբերականի թղթակիցը նշում է, որ «Վանայ խնդիրը չէ վերջացած եւ կը կարծեմ Պատրիարքարանը պիտի հակադրուի իմաստուն որոշում մը ընել... Պօղոս եպիսկոպոսի ներկայութիւն Վանայ շրջակայքները վտանգաւոր է. իր մեքենայութիւնները կը շարունակէ և կը ջանայ նորանոր խռովութիւններ յարուցանել»[3]: Ըստ հոդվածագրի (Հրուդան), ապագա չարիքների առաջն առնելու համար հարկավոր է չարանենգ եպիսկոպոսին օր առաջ և վերջնականորեն հեռացնել Վան-Վասպուրականից: Պողոսի կողմնակիցները սկսել էին դավեր նյութել «Միացյալ Ընկերության» Վանի պատասխանատուների դեմ և այդ դավը հաջողացնելու համար անուղղակի կերպով գործիք են դարձնում «Արմենիա» թերթը: Օրինակ, պատրիարքական շրջանակներից լուր է տարածվում, թե «Միացյալ ընկերության» Հայաստանի գավառների տեսուչ «պր. Սարեան իւր ստորագրութեամբ յօդուածներ հրատարակած է հարստահարութեանց նկատմամբ: Ընկերութեան տնօրեն ժողովը շատ յուզուեցաւ, Սարեան Պօլիս կանչել տալու չափ յառաջ գնաց, բայց յետոյ կամաց-կամաց եղելութիւնը իմացուեցաւ» [3]:

1887թ. հունվարի 12-ին թերթը հայտնում էր, որ Վանի մեջ քաղաքական հանցանքով բանտարկվածներից երեքը՝ Գէորգ Օտեանը, Միքայէլ Նաթանեանը և Հովհաննէս Քանքանեանը աքսորվել են Գոնիա: Ժողովուրդը, լսելով այս աղետալի լուրը, «այլևս չկրնալով դիմանայ սոցա ըրածներուն, խուռն բազմութեամբ լեցուեցաւ Առաջնորդարան և խնդրեց Գեր. Ալէաթճեան Գրիգորիս եպիսկոպոսէն որ երթայ կուսակալէն խնդրէ սոցա ազատումը» [3]:

1887թ. մարտի 2-ին թերթը տեղեկացնում էր, որ վանեցի վերոնշյալ երեք երիտասարդ աքսորյալները երեսուներեք օր տաժանելի կերպով ճամբորդելուց հետո «հասած են Նիկտէ (Գոնեայի գաւառ): Սեբաստիաէն մինչեւ Նիկտէ ձեռքերնին շղթայած տարեր են զանօնք թիրք զօրքերն»[3]: Հետաքրքրական է այն տեղեկությունը, որ թուրքական կրթական համակարգը համակարգող տեսուչը Վանի մի հայ վարժապետի հետ զրուցելիս նշել է, թե Փորթուգալյանը նստած Եվրոպայում, միշտ թուրքական տերության դեմ է հանդես գալիս, «մենք ալ անոր բոլոր աշակերտներ պիտի վերցունենք մէջտէղէն, այնպէս որ անոր այլևս չյիշուի Վանի մէջ» [3]:

1887թ. փետրվարի 19-ին թերթը հայտնում էր, որ Վանի տխրահռչակ Համիտ փաշան վախճանվել է, և որ նրա պաշտոնավարությունը շատ տխուր մի ժամանակամիջոց է կազմում Վանի տարեգրության մեջ: Նրա օրոք հայ ուսուցիչներ վտարվեցին, հայ անմեղ երիտասարդներ բանատարկվեցին և աքսորվեցին, «որոնց յանցանք ուրիշ բան չէր, բայց եթէ հայ լինելն»[3]: Նոր նահանգապետ կարգված Խալիլին թերթը հորդորում է խրատվել և զգաստանալ նախորդի թույլ տված ծանր սխալներից և գիտակցել «թէ բռնապետական իշխանութինը որչափ վնասակար կը լինի երկրին, թէ ի վնաս Օսմանեան կառավարութեան և թէ ի վնաս օսմանեան հպատակներին» [3]:

Եզրակացություն. Այսպիսով, «Արմենիա» պարբերականի էջերում, նրա հրատարակման անդրանիկ համարներից սկսած, լայնորեն ու բազմաշերտ ներկայացված է Վան-Վասպուրականը՝ ժողովրդային, սոցիալ-տնտեսական, հոգևոր-բարոյական ծանր հոգսերով ու հիմնահարցերով, մտահոգություններով ու տագնապներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Արմենիա», 1885թ., թիվ 8, 10,11, 37:
2. «Արմենիա», 1886թ., թիվ 1, 2, 5, 7, 8, 18, 24, 27, 44, 45, 89, 90, 95, 97, 98, 99:
3. «Արմենիա», 1887թ., թիվ 40, 41, 42, 50, 52, 55:

А.О. КАРАПЕТЯН

КАРТИНА ОБЩЕСТВЕННЫХ ПРОТИВОРЕЧИЙ В ВАНЕ НА СТРАНИЦАХ ПЕРИОДИКИ “АРМЕНИЯ”

Во французском городе Марсель на страницах газеты “Армения”, издаваемой Мкртичем Португаляном, широко и многопланово освещались национальные, социально-экономические, духовно-нравственные вопросы. М. Португалян, являющийся основателем и редактором газеты, в своих публикациях исследует и анализирует те политические и социальные процессы, которые протекают и происходят в Ване и областях Васпуракана, подвергает острой критике политику турецких властей, направленную против армянского населения, что привело к выселению армян с данных территорий. В первых же номерах газеты, перед нами предстает живой образ Вана.

Периодически в публикациях представлялась тяжелая жизнь народа, отягощенная повседневными заботами, страданиями и болью.

Ключевые слова: Ван-Васпуракан, газета “Армения», общественная противоречия, национальный деятель, политические аресты, статьи и корреспондеция.

A.H. KARAPETYAN

THE PANORAMA OF SOCIAL CONTRADICTIONS IN VAN IN THE NEWSPAPER “ARMENIA”

In the French city of Marseille, on the pages of the newspaper "Armenia" published by Mkrtich Portugalyan, national, socio-economic, spiritual and moral issues were widely and multifacetedly covered. M. Portugalyan, the founder and editor of the newspaper, publications, researched and analyzed the political and social processes that were taking place in Van and the regions of Vaspurakan, sharply criticized the policy of the Turkish authorities against the Armenian people, which led to the eviction of Armenians from the given territories. In the very first issues of the newspaper, we see a living image of Van.

From time to time, publications presented the hard life of the people, burdened by everyday worries, suffering and pain.

***Keywords**:* Van-Vaspurakan, perodieal «Armenia», social conflicts, national figure, political arrests, articles and correspondence.

ՀՏԴ 329(479.25):336.563:94(4)″1914/19″

Ա.Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ /1908-14ԹԹ./

Դիտարկվում են հայ քաղաքական կուսակցությունների կազմակերպական կառույցները Եղեռնի նախօրեին, ինչի հիմքով հնարավոր է դառնում վերլուծել արևմտահայության շրջանում նրանց ներկայացվածությունն ու գործունեության արդյունավետությունը:

Առանցքային բառեր. Կենտրոնական կոմիտե, մասնաճյուղ, կուսակցության անդամ, կազմակերպական մարմիններ:

Աշխատանքում հարցը դիտարկվում է տեսական նոր մոտեցմամբ՝ կատարելով հիշյալ ժամանակաշրջանում հայ քաղաքական կուսակցություններից Հ. Յ. Դաշնակցության գործունեության ընթացքը ստուգող հետազոտություն: Կուսակցության կազմակերպական կառույցների /1908-1914 թթ./ ուսումնասիրության նպատակը Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրության տարածքում նրա կազմակերպական կառուցվածքի, նրանց ներկայացվածության իրական պատկերի և հայերի ինքնապաշտպանության ուղղությամբ ընդունված որոշումների կատարման ընթացքի հետազոտությունն ու ներկայացումն է:

Հայ հեղափոխական կուսակցության կառույցները, 1908թ. երիտթուրքական հեղաշրջմամբ հաստատված սահմանադրական կարգի արդյունքում, բնականաբար, պետք է ենթարկվեին փոփոխությունների: Այդ փոփոխությունը ցույց